

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե) գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որը քաղաքաշինության բնագավառում մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:

2. Կոմիտեն Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության իրավահաջորդն է:

3. Կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

4. Կոմիտեի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով:

5. Կոմիտեն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

6. Կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

7. Կոմիտեն կազմված է կոմիտեի նախագահից, կոմիտեի նախագահի առաջին տեղակալից, կոմիտեի նախագահի տեղակալներից, կոմիտեի աշխատակազմից, ինչպես նաև կոմիտեի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպություններից:

8. Կոմիտեի նպատակները և խնդիրներն են՝

1) երկրի տարաբնակեցման համակարգի հավասարակշռման, տարածաշրջանային զարգացման անհամամասնությունների հաղթահարման, բազմակենտրոն տարածական զարգացման պայմանների ապահովումը.

2) բնակավայրերի կայուն զարգացման խթանումը, պատմամշակութային միջավայրերի քաղաքաշինական ինքնատիպության ապահովումը և գրավչության բարձրացումը.

3) «կանաչ քաղաքաշինության» սկզբունքի ձևավորումը, բնական և մշակութային լանդշաֆտների ներդաշնակ զարգացման ապահովումը.

4) էներգախնայող և էներգաարդյունավետ շենքերի ու քաղաքաշինական համակարգերի նախագծման և շինարարության խթանումը, դրա համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի մշակման ապահովումը.

5) ազգային ճարտարապետության հոգևոր ու մշակութային ավանդույթների պահպանումը, դրանց վերարտադրության համար նպաստավոր պայմանների ստեղծումը.

6) ըստ անհրաժեշտության նոր կառուցվող ճարտարապետական համալիրների և առանձին կառույցների իրականացմանն ուղղված ներդրումային նախաձեռնությունների, դրանց կառուցապատման հայեցակարգերի և նախագծերի մշակման գործընթացում մասնագիտական խորհրդատվության ապահովումը.

7) քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում կառուցապատման միջավայրի ստեղծման և զարգացման պայմանների ապահովումը.

8) քաղաքաշինության բնագավառում գործարար միջավայրի բարելավումը և ներդրումային նախաձեռնությունների խրախուսումը.

9) քաղաքաշինության բնագավառի գիտական, տեխնիկական զարգացումը և նոր տեխնոլոգիաների խթանումը.

10) շենքերի և շինությունների սեյսմակայունության, վտանգավոր երկրաբանական երևույթներից դրանց ինժեներական պաշտպանության ապահովումը.

11) շինարարության զարգացման և իրականացման, շինարարական արտադրանքի և ծառայությունների որակական չափանիշների բարձրացման, տեխնոլոգիաների արդիականացման պայմանների ապահովումը.

12) քաղաքաշինության բնագավառում պետական և համայնքային բյուջեների հաշվին իրականացվող աշխատանքների գնագոյացման սկզբունքների ձևավորումը.

13) կառույցների շինարարության և շահագործման ընթացքում մարդկանց ու միջավայրի անվտանգության, քաղաքաշինական գործունեության սուբյեկտների կողմից բնագավառը կանոնակարգող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողությունը.

14) քաղաքաշինության բնագավառում ծառայությունների որակի բարձրացման, սպառողների իրավունքների պաշտպանության նպատակով քաղաքաշինական գործունեության առանձին տեսակների լիցենզավորումը.

15) քաղաքաշինական տեղեկատվական համակարգի ձևավորումը, Հայաստանի Հանրապետության տարածքի քաղաքաշինական կադաստրի վարումն ու կադաստրային տվյալների ամփոփումը.

16) բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման ու շահագործման բնագավառում առկա խնդիրների կանոնակարգումը.

17) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ խնդիրների իրականացումը:

II. ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Կոմիտեն իր նպատակների և խնդիրների իրականացման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) պետական քաղաքաշինական, տարածական զարգացման ծրագրերի մշակում և դրանց իրականացման մոնիթորինգ.

2) քաղաքաշինության բնագավառի զարգացումն ապահովող ու գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակում, կոմիտեի գործունեությանն առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացում, դրանց կատարելագործման վերաբերյալ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ ներկայացնելը.

3) ազգային և տարածաշրջանային (միկրոտարածաշրջանային) մակարդակների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում.

4) համայնքների գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգում, տարածքների և բնակավայրերի կայուն քաղաքաշինական զարգացման ռազմավարության մշակում.

5) ըստ անհրաժեշտության՝ տեղական ինքնակառավարման մարմիններին ճարտարապետության բնագավառի մասնագիտական խորհրդատվության և բնագավառին առնչվող խնդիրների լուծման գործում օժանդակության տրամադրում.

6) պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում ճարտարապետական համալիրների կառուցապատման ներդրումային ծրագրերի և դրանց իրականացման գործում աջակցության տրամադրում.

7) հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման, պատմամշակութային ու բնության հատուկ պահպանվող տարածքներ ներառող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում.

8) հանրապետությունում քաղաքաշինական իրադրության և զարգացման միտումների հետազոտում, կարճաժամկետ, միջնաժամկետ և հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունների վերլուծում, բացահայտում ու նախանշում.

9) քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, ինչպես նաև տարբեր գործառական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակում.

10) քաղաքների էկոլոգիական վիճակի բարելավմանը, շրջակա միջավայրի վրա ուրբանիզացիայի բացասական հետևանքների նվազեցմանը նպատակաուղղված, ինչպես նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության բարձրացման տարածական զարգացման ծրագրերի մշակում.

11) քաղաքաշինության բնագավառում էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործում.

12) քաղաքաշինության բնագավառում նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակում և միջազգային ստանդարտներին դրանց համապատասխանեցման գործընթացներին մասնակցություն.

13) շենքերի էներգախնայողության ու էներգաարդյունավետության բարձրացման ծրագրերի մշակում և համակարգում, նշված խնդիրների շրջանակներում համապատասխան միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն.

14) բնակավայրերի պատմաճարտարապետական միջավայրի քաղաքաշինական վերականգնման ու զարգացման ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.

15) տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի շրջանակներում քաղաքաշինական փաստաթղթերի համաձայնեցում.

16) բնակավայրերի հողերի օգտագործման, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսված այլ հողերի քաղաքաշինական սահմանափակումների և նորմերի սահմանում.

17) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման առաջադրանքների և նախագծային փաստաթղթերի սահմանված կարգով համաձայնեցում.

18) քաղաքաշինության նպատակով հողամասերի հատկացումների վերաբերյալ առաջարկությունների, ճարտարապետահատակագծային առաջադրանքների ու ճարտարապետաշինարարական նախագծերի սահմանված կարգով համաձայնեցում.

19) ճարտարապետության բնագավառի ու զարգացման ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.

20) ճարտարապետության բնագավառի կատարելագործման միջոցառումների իրականացում.

21) ճարտարապետության բնագավառի միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն.

22) ճարտարապետության բնագավառին առնչվող ցուցահանդեսների, մրցույթների, համաժողովների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում.

23) կոմիտեի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքային գործունեության համակարգում.

24) ճարտարապետության և շինարարության բնագավառում իրենց վաստակով նշանավոր անձանց սահմանված կարգով պետական պարգևների, պատվավոր կոչումների ներկայացնելը, մրցանակների շնորհում.

25) քաղաքաշինական օբյեկտների լավագույն ճարտարապետական լուծումների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպում և դրանց իրականացմանն աջակցում.

26) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ղեկքերում քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում կառուցվող առանձին օբյեկտների կամ համալիրների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված հատուկ և կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկից Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ առանձնացված օբյեկտների կամ համալիրների ճարտարապետահատակագծային առաջադրանքների և նախագծերի ճարտարապետական մասի էսքիզային լուծումների համաձայնեցում.

27) քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների գործունեության կարգի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը, քաղաքաշինական հատուկ կարգավորման օբյեկտների զարգացման ծրագրերի մշակում.

28) բազմաբնակարան շենքերի պահպանման, շահագործման և կառավարման համակարգի արդիականացմանն ուղղված պետական աջակցության նպատակային ծրագրերի մշակում.

29) քաղաքաշինության բնագավառի տեխնիկական զարգացման գիտատեխնիկական պետական նպատակային և նորարարությանը նպատակաուղղված ծրագրերի մշակում.

30) շենքերի անձնագրավորման, սեյսմակայունության ուղղությամբ իրականացվող հետազննական, ինչպես նաև գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական աշխատանքների կազմակերպում և համակարգում, շինարարությունում դրանց արդյունքների ներդրում.

31) Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերով սահմանված սահմանային հարկայնությունը գերազանցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության կազմակերպում.

32) վտանգավոր երկրաբանական երևույթներից քաղաքաշինական օբյեկտների պաշտպանության ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգի իրականացում.

33) քաղաքաշինության բնագավառի հանրապետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման, հաստատման (բացի ազգային ստանդարտներից), ինչպես նաև միջպետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ընդունման և Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց գործարկման գործընթացի վարում ու համակարգում.

34) քաղաքաշինության բնագավառի ստանդարտացման գործընթացի վարում, ինչպես նաև բնագավառի սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների գնահատման և դրանց հավատարմագրման աշխատանքներում համապատասխան փորձագետների ներգրավվածության ապահովում.

35) շինարարության բնագավառի, զարգացման ծրագրերի մշակում և կատարված աշխատանքների մոնիթորինգի իրականացում.

36) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող քաղաքաշինական ծրագրերի պատվիրատուի գործառույթների կատարում.

37) քաղաքաշինության բնագավառում հանրապետության սոցիալ-տնտեսական և տարածքային զարգացման, նպատակային ու հատուկ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ու հայեցակարգերի մշակում.

38) բնագավառին առնչվող Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) նախագծերի նախապատրաստման, միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության և միջազգային պայմանագրերին (համաձայնագրերին) միանալու նպատակով իրականացվող աշխատանքներին, Հայաստանի Հանրապետության անդամակցության և միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների իրագործմանը մասնակցություն.

39) կոմիտեի՝ հասարակայնության հետ կապերի ապահովում և քաղաքաշինության բնագավառի մասնագիտական, հասարակական և այլ կազմակերպությունների հետ համագործակցություն.

40) քաղաքացիական պաշտպանության և զորահավաքային նախապատրաստության բնագավառում պլանների ու ծրագրերի մշակում, հիմնական միջոցառումների իրականացում, ինչպես նաև համակարգի աշխատողների պաշտպանության և զորահավաքային ռեսուրսների հաշվառման կազմակերպում.

41) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառնություններ:

III. ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. Կոմիտեն կառավարում է կոմիտեի նախագահը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

11. Կոմիտեի նախագահն ունի առաջին տեղակալ, տեղակալներ, որոնց պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ խորհրդակցելով կոմիտեի նախագահի հետ:

12. Կոմիտեի նախագահն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով ու կարգադրություններով, սույն կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

13. Կոմիտեի նախագահն ապահովում է կոմիտեին վերապահված խնդիրների ու գործառույթների իրականացումը և պատասխանատու է լիազորված բնագավառում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող վիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

14. Կոմիտեի նախագահը հաշվետու է Հայաստանի Հանրապետության Նախագահին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն ու Հայաստանի Հանրապետության վարչապետին:

15. Կոմիտեի նախագահը՝

1) իր իրավասության սահմաններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում է գերատեսչական իրավական ակտեր.

2) ղեկավարում է կոմիտեի ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

3) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառին, նպատակներին ու խնդիրներին համապատասխան առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին.

4) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս կոմիտեի անունից, ինչպես նաև տալիս է կոմիտեի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնում է առաջարկություն կոմիտեի աշխատակազմի ղեկավարին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու, աշխատակազմի ղեկավարի նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ.

6) օրենքով սահմանված կարգով նշանակումներ է կատարում կոմիտեի քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում, գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի պաշտոններում, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աուդիտորների պաշտոններում, ինչպես նաև այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

7) սահմանում է աշխատանքի բաշխումն իր տեղակալների միջև.

8) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում իր խորհրդականներին, մամուլի քարտուղարին ու օգնականներին, իր ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական տույժի միջոցներ.

9) օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան սահմանում է կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

10) հաստատում է կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները.

11) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կոմիտեի աշխատակազմի ղեկավարի, ինչպես նաև կոմիտեի ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, հանձնարարագրերը, կարգադրություններն ու ցուցումները.

12) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի գործունեության մասին տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, քննում դրանց գործունեության ստուգման արդյունքները, հաստատում կոմիտեի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը և ֆինանսական հաշվետվությունների հավաստիության վերստուգման արդյունքները.

13) իրականացնում է վերահսկողություն կոմիտեի աշխատակազմին ամրացված պետական սեփականության պահպանության ու օտարման նկատմամբ.

14) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում կոմիտեի կանոնադրությունն ու աշխատակազմի կառուցվածքը.

15) Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատողների թիվը.

16) օրենքով նախատեսված ղեպքերում և կարգով շնորհում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ և 3-րդ դասերի խորհրդականների դասային աստիճաններ, ինչպես նաև իջեցնում է դասային աստիճանը և զրկում դասային աստիճանից.

17) ստեղծում է խորհրդակցական մարմիններ.

18) ճարտարապետության և շինարարության բնագավառում ավանդ ունեցող անձանց շնորհում է կոմիտեի հուշամեդալներ, կրծքանշաններ, շնորհակալագրեր, ինչպես նաև հաստատում է դրանք շնորհելու կարգը և ձևերը.

19) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

16. Կոմիտեի նախագահի բացակայության դեպքում կոմիտեի նախագահի պարտականությունները կատարում է նախագահի առաջին տեղակալը, իսկ անհնարինության դեպքում՝ տեղակալներից մեկը:

17. Կոմիտեի նախագահի տեղակալն իրեն հանձնարարված բնագավառում՝

1) իր լիազորությունների սահմաններում համակարգում է կոմիտեի քաղաքականության ապահովման համար անհրաժեշտ իրականացվող աշխատանքները՝ տալով ցուցումներ ու հանձնարարականներ կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով.

2) կոմիտեի նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ կոմիտեի համակարգի մարմիններին տալիս է որոշակի հանձնարարականներ ու առաջադրանքներ և իրականացնում վերահսկողություն դրանց կատարման նկատմամբ.

3) իրականացնում է կոմիտեի նախագահի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումները.

4) համակարգում է կոմիտեի համակարգի մարմինների կողմից իրականացվող աշխատանքների մասնագիտական ուսումնասիրությունները և աշխատանքների ընթացքի օպերատիվ վերլուծությունը.

5) իր լիազորությունների սահմաններում համագործակցում է պետական կառավարման և այլ մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հետ.

6) համակարգում է կոմիտեի կողմից մշակվող և իրականացվող ծրագրերի աշխատանքները.

7) ապահովում է կոմիտեի նախագահի հրամանների ու ցուցումների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

8) կոմիտեի նախագահին և աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ նրանց իրավասություններին առնչվող հարցերի վերաբերյալ.

9) կոմիտեի նախագահին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն իր կողմից համակարգվող աշխատանքների վերաբերյալ.

10) իրականացնում է այլ գործառույթներ:

18. Կոմիտեի առջև դրված խնդիրներն ու գործառույթներն արդյունավետ իրականացնելու նպատակով կոմիտեի նախագահի հրամանով ստեղծվում է կոմիտեի նախագահին կից կոլեգիա: Կոմիտեի նախագահին կից կոլեգիան՝

1) օժանդակում է կոմիտեի գործունեության ռազմավարական պլանավորման ծրագրերի մշակման գործընթացներին.

2) նպաստում է ռազմավարական ծրագրերի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը.

3) մշակում և ներկայացնում է կոմիտեի կառավարման արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ:

19. Կոմիտեի նախագահի խորհրդականը՝

1) համաձայնեցնելով կոմիտեի նախագահի հետ՝ կազմում է իր աշխատանքային ծրագրերը.

2) պարբերաբար կոմիտեի նախագահին է ներկայացնում զեկույցներ, անհրաժեշտ վերլուծական նյութեր, առաջարկություններ իրեն հանձնարարված բնագավառներում

տիրող վիճակի, երևույթների և իրադարձությունների մասին, առկա հիմնահարցերի լուծման վերաբերյալ.

3) կազմակերպում է քաղաքացիների ընդունելություն.

4) կոմիտեի նախագահի հանձնարարությամբ մասնակցում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում՝ իրենց հանձնարարված բնագավառներին վերաբերող հարցերի քննարկմանը.

5) կոմիտեի նախագահի որոշմամբ կարող է ղեկավարել կոմիտեին առընթեր խորհրդակցական մարմինների գործունեությունը կամ մասնակցել դրանց աշխատանքներին.

6) կոմիտեի նախագահի հանձնարարությամբ հրավիրում է խորհրդակցություններ, կազմակերպում իրեն հանձնարարված հարցերի քննարկումներ.

7) կատարում է կոմիտեի նախագահի կողմից տրված այլ հանձնարարականներ:

20. Կոմիտեի նախագահի օգնականը՝

1) կազմակերպական, տեղեկատվական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում կոմիտեի նախագահին.

2) համաձայնեցնելով կոմիտեի նախագահի հետ՝ կազմակերպում է կոմիտեի նախագահի ընթացիկ և հեռանկարային աշխատանքների ծրագրերի նախապատրաստումը և դրանք ներկայացնում կոմիտեի նախագահին.

3) կազմակերպում է կոմիտեի նախագահի խորհրդակցությունների, հանդիպումների, այցերի և ուղևորությունների նախապատրաստումը.

4) համագործակցելով կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների հետ՝ կոմիտեի նախագահի համար նախապատրաստում է տեղեկատվական և վերլուծական նյութեր.

5) նախապատրաստում և կոմիտեի նախագահին է ներկայացնում առաջարկություններ աշխատանքային ծրագրերի վերաբերյալ.

6) կատարում է կոմիտեի նախագահի կողմից տրված այլ հանձնարարականներ:

21. Կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարը՝

1) ներկայացնում է կոմիտեի նախագահի պաշտոնական տեսակետները Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների տեղեկատվության միջոցներին.

2) անցկացնում է ասուլիսներ և ճեպագրույցներ.

3) իր գործունեության ծրագրման և իրականացման վերաբերյալ առաջարկություններ ու վերլուծություններ է ներկայացնում կոմիտեի նախագահին և կոմիտեի նախագահի հետ համաձայնեցնելուց հետո հետևում դրանց իրականացմանը.

4) կազմակերպում է կոմիտեի նախագահի հարցազրույցները, ասուլիսներն ու հանդիպումները մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների հետ.

5) կոմիտեի նախագահի հանձնարարությամբ՝ հանդես է գալիս հայտարարություններով և պարզաբանումներով.

6) կատարում է կոմիտեի նախագահի այլ հանձնարարականներ:

22. Կոմիտեի նախագահի սահմանած գործառույթները և հանձնարարականները կատարելիս՝ նախարարի խորհրդականները, կոմիտեի նախագահի մամուլի քարտուղարը համագործակցում են միմյանց, կոմիտեի աշխատակազմի ղեկավարի, նրա տեղակալների և կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ:

IV. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ

23. Կոմիտեի աշխատակազմի նպատակը և խնդիրը կոմիտեի (այդ թվում՝ նրա կազմում գործող գործակալությունների ու տեսչությունների)՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ կոմիտեին վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացման, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերությունների կոմիտեի մասնակցության ապահովումն է:

24. Կոմիտեի աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող պետական կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ենթակա է հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

25. Կոմիտեի աշխատակազմը գործում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Պետական կառավարչական հիմնարկների մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ օրենքների ու իրավական ակտերի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

26. Կոմիտեի աշխատակազմն իր իրավասության սահմաններում կարող է Հայաստանի Հանրապետության անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

27. Կոմիտեի աշխատակազմն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

28. Կոմիտեի աշխատակազմն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

29. Կոմիտեի գործունեության հետ կապված ծախսերն իրականացվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կողմից հատկացումների հաշվին:

30. Կոմիտեի աշխատակազմն իր ֆինանսական գործառնություններն իրականացնում է գանձապետական համակարգի միջոցով: Կոմիտեի աշխատակազմի պահպանման կարիքների համար, ինչպես նաև կոմիտեի լիազորությանը վերապահված բյուջետային ծրագրերի շրջանակներում գնումները կատարվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

31. Կոմիտեի աշխատակազմի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը:

32. Կոմիտեի աշխատակազմի անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ:

33. Կոմիտեի աշխատակազմի գտնվելու վայրն է՝ քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական N 3 մասնաշենք:

V. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՒՅՔԸ

34. Կոմիտեի աշխատակազմի գույքն օրենքով սահմանված կարգով ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության անունից աշխատակազմի կնքած գործարքներով ձեռք բերված և աշխատակազմի տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից (ներառյալ գույքային իրավունքները), որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ կոմիտեի աշխատակազմին կարող է վերապահվել նաև պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

35. Կոմիտեի աշխատակազմն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով ու իր կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, իր գործունեության նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան, օգտագործելու, տնօրինելու և տիրապետելու իր գույքը:

VI. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

36. Կոմիտեի աշխատակազմի կառուցվածքում ընդգրկվում են կառուցվածքային ստորաբաժանումներ (վարչություն, բաժին, քարտուղարություն) և առանձնացված ստորաբաժանումներ (գործակալություն, տեսչություն):

VII. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

37. Կոմիտեի աշխատակազմը կառավարում են Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կոմիտեի նախագահը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ իրենց վերապահված իրավասությունների սահմաններում:

38. Կոմիտեի աշխատակազմը ղեկավարում է կոմիտեի աշխատակազմի ղեկավարը:

39. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) հաստատում է կոմիտեի աշխատակազմի կանոնադրությունը և դրա մեջ կատարվող փոփոխությունները.

2) որոշում է կոմիտեի աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը.

3) հաստատում է կոմիտեի աշխատակազմի կառուցվածքը.

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով իրեն վերապահված այլ լիազորություններ:

40. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարն օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կոմիտեի աշխատակազմի ընթացիկ գործունեությունը և կրում պատասխանատվություն օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության և կոմիտեի նախագահի որոշումների, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

41. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարն օրենքով սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետությանը պատճառված գույքային վնասի համար: Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի լիազորությունների դադարեցումը չի կարող հիմք հանդիսանալ պատճառված նյութական վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

42. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը պարտավոր է չկատարել հիմնադրի, կոմիտեի նախագահի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամաններն ու հրահանգները:

43. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարի բացակայության կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրան փոխարինելու հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

44. Կոմիտեի աշխատակազմի ղեկավարը՝

1) առանց լիազորագրի՝ իր իրավասության սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, իր լիազորությունների սահմաններում դատարանում հանդես է գալիս որպես հայցվոր կամ պատասխանող, տալիս է լիազորագրեր՝ դատարանում գործը վարելու և այլ դատաիրավական գործողություններ իրականացնելու համար.

2) օրենքով, այլ իրավական ակտերով, հիմնադրի կողմից և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) իր իրավասության սահմաններում տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) ապահովում է աշխատակազմում քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան՝ անձնակազմի կառավարման հետ կապված գործառույթների իրականացումը.

5) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում պաշտոնի (աշխատանքի) նշանակում և պաշտոնից (աշխատանքից) ազատում է կոմիտեի աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի ու կարգապահական տույժի միջոցներ.

6) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով շնորհում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ ու 3-րդ դասերի առաջատար

ծառայողների և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության 1-ին, 2-րդ ու 3-րդ դասերի կրտսեր ծառայողների դասային աստիճաններ և գրկում դասային աստիճաններից.

7) օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ.

8) կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի տարեկան հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, այդ թվում՝ ապահովում է կոմիտեի աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական հաշվետվությունների կազմումը.

9) կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում կոմիտեի աշխատակազմի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը, դրա կատարողականը, տարեկան ֆինանսական հաշվետվություններն ու տարեկան հաշվեկշիռը, միջոցներ է ձեռնարկում ստուգումներով հայտնաբերված ֆինանսական խախտումների վերացման համար.

10) կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ կոմիտեի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունների վերաբերյալ.

11) կազմակերպում է կոմիտեի բյուջեի նախագծի նախապատրաստական աշխատանքները և ապահովում բյուջետային միջոցների ծախսերի կատարումը.

12) կազմակերպում է աշխատակազմում քննարկումներ և խորհրդակցություններ.

13) վերահսկում է կոմիտեի աշխատակազմի կողմից սահմանված ժամկետներում աշխատանքների կատարման ընթացքը.

14) կոմիտեի նախագահի ստորագրությանն է ներկայացնում կոմիտեի նախագահի հրամանները և կարգադրությունները.

15) ապահովում է համագործակցությունը Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների աշխատակազմերի հետ.

16) կազմակերպում է կոմիտեի գործավարության և տեխնիկական սպասարկման աշխատանքները.

17) իրականացնում է կոմիտեի գլխավոր ֆինանսիստի պարտականությունները.

18) իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

VIII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

45. Կոմիտեի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և համապատասխան մարմիններ ներկայացնում ֆինանսական, հարկային, մաքսային, պարտադիր վճարների և վիճակագրական հաշվետվություններ, հաշվարկներ, հայտարարագրեր:

46. Կոմիտեի աշխատակազմի գործունեության մասին տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

IX. ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

